**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-1**

ք.Եղեգնաձոր «21» հուլիս 2017 թ.

«ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը », ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի Կ.Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էդիտա» ԱԿ-ն, ի դեմս նախագահ Դ.Վարդանյանի, որը գործում է արտադրական կոպերատիվի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *ՀՀ Վայոց ձորի մարզի Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգման, Արփի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման, նոր Ազնաբերդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցման,* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **30 սեպտեմբեր 2017թ.:**
( աշխատանքների կատարման վերջնաժամկետը)

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան. կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկումը, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) Մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18 870 000** (տասնութ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար ) ՀՀ դրամ, որից **3 145 000** (երեք միլիոն մեկ հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամը ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

3-րդ չափաբաժին <u>*Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում-5 988*</u> 000 (հինգ միլիոն ինը հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ՝ որից 998 000 ( ինը հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

7-րդ չափաբաժին <u>*Արփի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում*</u> -9 342 000 (ինը միլիոն երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ՝ որից 1 557 000 ( մեկ միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

8-րդ չափաբաժին <u>*նոր Աղնաբերդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցման-*</u> 3 540 000 ( երեք միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ որից 590 000 ( հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ --նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան չափաբաժնի գինն է:*

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Կապալառուի առաջարկության առկայության դեպքում` պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի` երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները` ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ` բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի` պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում` նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված` ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1; N 2; N 3; N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
3-րդ չափաբաժին Հ/Հ 900351000436
7-րդ չափաբաժին Հ/Հ 900351000519
8-րդ չափաբաժին Հ/Հ 900351000543

ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան 2րդ փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<ՀայէկոնոմբանԿ>>
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 21» հուլիս 2017թ. կնքված
« ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի

Վայոց ձորի մարզի Նոր Ազնաբերդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| ՀՀ | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Ճյուղ-1 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | VI կարգի գրունտի փխրեցում խրամուղիում | $մ^3$ | 16,0 | 7,30 | 116,765 |
| 2 | Խրամուղու մշակում փխրեցված VI կարգի գրունտներում, կողալիցքով | $մ^3$ | 16,0 | 1,11 | 17,833 |
| 3 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | $մ^3$ | 354,0 | 0,70 | 248,948 |
| 4 | Նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ փափուկ բնահողից | $մ^3$ | 35,50 | 1,45 | 51,343 |
| 5 | Պաշտպանիչ շերտի իրականացում փափուկ բնահողից | $մ^3$ | 120,0 | 1,45 | 173,555 |
| 6 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից | $մ^3$ | 171,50 | 0,05 | 9,102 |
| 7 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | $մ^3$ | 43,0 | 0,05 | 2,282 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0,00 | |
| 1 | Ապամոնտաժված պողպատե խողովակների DN273x4մմ վերատեղադրում, փորջարկումով | գծմ | 530,0 | 1,63 | 864,990 |
| 2 | Պողպատե DN273x4մմ խողովակների նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 530,0 | 1,37 | 724,341 |
| 3 | Գլաքարե շարվածք | $մ^3$ | 12,0 | 9,08 | 108,910 |
| | ***Ապամոնտաժման աշխատանքներ*** | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում մեխանիզմով, կողալիցքով | $մ^3$ | 172,0 | 0,54 | 93,571 |
| 2 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | $մ^3$ | 19,0 | 2,84 | 53,951 |
| 3 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից | $մ^3$ | 191,0 | 0,05 | 10,137 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0,00 | 0,000 |
| 1 | DN273x4մմ պողպատե խողովակների ապամոնտաժում | գծմ | 530,0 | 0,98 | 520,400 |
| 2 | Ապամոնտաժված DN273x4մմ պողպատե խողովակների տեղափոխում 5,0 կմ հեռավորության վրա | տ | 14,270 | 6,12 | 87,288 |
| 3 | Ապամոնտաժված DN273x4մմ պողպատե խողովակների արտաքին մակերևույթի մաքրում | $մ^2$ | 454,0 | 0,41 | 186,744 |
| | *Ընդամենը 1 մասի* | | | | 3 270,163 |
| | 2. Գլխամասային ջրընդունիչ N1 | | | | |
| 1 | Փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | $մ^3$ | 15,0 | 0,70 | 10,549 |
| 2 | Փոսորակի ետլիցք կողալիցքով մշակված գրունտներից | $մ^3$ | 6,0 | 0,05 | 0,318 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | մ$^{3}$ | 9,0 | 0,05 | 0,478 |
| 4 | Ավազակոպճային նախաշերտ | մ$^{3}$ | 0,80 | 7,83 | 6,263 |
| 5 | Հատակի իրականացում B15 F150 W4 դասի բետոնով | մ$^{3}$ | 2,0 | 84,85 | 169,707 |
| 6 | Պատերի իրականացում B15 F150 W4 դասի բետոնով | մ$^{3}$ | 2,50 | 98,22 | 245,551 |
| 7 | Քարե լիցքի իրականացում | մ$^{3}$ | 0,40 | 9,08 | 3,630 |
| 8 | Պողպատե խողովակ D=377x4մմ, մոնտաժումով | գծմ | 2,0 | 33,25 | 66,503 |
| 9 | D=377x4մմ պողպատե խողովակների նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 2,0 | 1,78 | 3,556 |
| 10 | Պողպատե խողովակ D=57x3մմ, մոնտաժումով | գծմ | 1,20 | 2,60 | 3,121 |
| 11 | Հարթ փական, մոնտաժումով | տ | 0,04669 | 1 222,05 | 57,058 |
| 12 | Ճաղավանդակ, տեղադրումով | կգ | 2,0 | 0,74 | 1,486 |
| 13 | Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ | մ$^{2}$ | 2,90 | 1,01 | 2,924 |
| | *Ընդամենը 2 մասի* | | | | 571,145 |
| | 3. Առկա ոռոգման առվին միացման հանգույց | | | | |
| 1 | VI կարգի գրունտի փխրեցում փոսորակում | մ$^{3}$ | 2,0 | 7,30 | 14,596 |
| 2 | Փոսորակի մշակում փխրեցված VI կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^{3}$ | 2,0 | 1,11 | 2,229 |
| 3 | Փոսորակի ետլիցք կողալիցքով մշակված գրունտներից | մ$^{3}$ | 1,0 | 0,05 | 0,053 |
| 4 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | մ$^{3}$ | 1,0 | 0,05 | 0,053 |
| 5 | Ավազակոպճային նախաշերտ | մ$^{3}$ | 0,10 | 7,83 | 0,783 |
| 6 | Պատերի իրականացում B15 դասի բետոնով | մ$^{3}$ | 0,750 | 59,51 | 44,633 |
| 7 | Քարե լիցքի իրականացում | մ$^{3}$ | 1,50 | 8,68 | 13,017 |
| | *Ընդամենը 3 մասի* | | | | 75,363 |
| | *Ամբողջը 1 - 3 մասերի* | | | | 3 916,671 |
| | ԱԱՀ 20% | | | | 783,334 |
| | Ամբողջը | | | | 4 700,00 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000543
ՀՎՀՀ 08907717
------------ Կ.Սահակյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ.
գ.Գեղամավան 2րդ փողոց.3-րդ
նրբ., 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
------------
/ստորագրություն/
Կ.Տ.

* Կապալառուն աշխատանքները կատարում է Նոր Ազնաբերդ համայնքում:

Հավելված թիվ 1
«21 » հուլիս 20 17 թ. կնքված
« ՀՀՎՁՄ-ԳՀԱԾՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի

ՀՀ Վայոց Ձորի մարզի Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգման

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| ՀՀ | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Ջրատար Ջ-1 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, բարձելով ա/մ և տեղափոխելով 1,0կմ հեռավորության վրա, (քայքայվծ ասֆալտբետոնե ծածկույթ) | մ³ | 2,0 | 3,79 | 7,574 |
| 2 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 810,50 | 1,02 | 830,463 |
| 3 | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով | մ³ | 37,0 | 20,69 | 765,425 |
| 4 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 4,50 | 0,58 | 2,626 |
| 5 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ³ | 65,0 | 5,54 | 359,982 |
| 6 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ³ | 160,0 | 4,03 | 645,387 |
| 7 | Խրամուղու ետլիցք III կարգի կողալիցքի մշակված գրունտներից | մ³ | 4,50 | 0,05 | 0,233 |
| 8 | Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից | մ³ | 584,0 | 0,05 | 30,298 |
| 9 | Խրամուղու ետլիցք ձեռքով V կարգի կողալիցքի մշակված գրունտներից | մ³ | 27,50 | 1,67 | 46,011 |
| 10 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում | մ³ | 226,50 | 0,05 | 11,751 |
| 11 | Ավելացած գրունտի հարթեցում տեղում ձեռքով | մ³ | 9,50 | 1,67 | 15,895 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de110, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 945,0 | 4,06 | 3 836,331 |
| 2 | Պոլիէթիլենե անկյունակ de110, α=90°, մոնտաժումով | հատ | 1 | 9,05 | 9,053 |
| 3 | Պոլիէթիլենե միջադիր de110, մոնտաժումով | հատ | 1 | 6,59 | 6,589 |
| 4 | Պողպատե կցաշուրթ DN100, PN=1.0ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 4,81 | 9,624 |
| 5 | Պողպատե պատյան D=325x7մմ, մոնտաժումով | գծմ | 18,0 | 47,32 | 851,765 |
| 6 | Ավազակոպճային նախաշերտի իրականացում | մ³ | 0,40 | 4,88 | 1,951 |
| 7 | Հենարանների իրականացում B15 դասի բետոնով | մ³ | 3,40 | 68,60 | 233,234 |
| 8 | Ներդիր դետալներ, տեղադրումով | տ | 0,04220 | 692,44 | 29,221 |
| 9 | Պոլիէթիլենե (PE) խողովակների ջերմամեկուսացում հանքաբամբակով | մ³ | 0,840 | 37,29 | 31,323 |
| 10 | Պողպատե պատյանի յուղաներկում 2 անգամ | մ² | 18,0 | 0,95 | 17,043 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Պոլիէթիլենե(PE) de110 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,9450 | 96,89 | 91,557 |
| | *Ընդամենը 1 մասի* | | | | 7 833,336 |
| | ԱԱՀ 20% | | | | 1566,667 |
| | Ամբողջը | | | | 9 400,00 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000436
ՀՎՀՀ 08907717
__________ Վ.Սահակյան
/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան
2րդ փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
__________
/ստորագրություն/

* Կապալառուն աշխատանքները կատարում է Հերմոն համայնքում:

Հավելված թիվ 1
« 21» հուլիս 2017թ. կնքված
« ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի

ՀՀ Վայոց Ձորի մարզի Արփի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգման

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

| ՀՀ | Աշխատանքների տեսակները և անվանումը | Չափման միավորը | Քանակ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Ջրագիծ Ջ-1 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1. | Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 220,0 | 1,01 | 221,443 |
| 2 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 503,0 | 0,75 | 378,122 |
| 3 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ³ | 432,0 | 0,57 | 247,690 |
| 4 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ³ | 88,50 | 5,44 | 481,485 |
| 5 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ³ | 212,0 | 3,96 | 840,056 |
| 6 | Խրամուղու ետլիցք III կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ³ | 432,0 | 0,32 | 137,606 |
| 7 | Խրամուղու ետլիցք IV կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ³ | 412,0 | 0,37 | 152,232 |
| 8 | Ավելացած V կարգի գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ³ | 220,0 | 3,41 | 751,224 |
| 9 | Ավելացած IV կարգի գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ³ | 91,0 | 3,17 | 288,704 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0,00 | |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de110, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 920,0 | 3,99 | 3 668,970 |
| 2 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de90, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 160,0 | 2,87 | 458,685 |
| 3 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de63, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 220,0 | 1,54 | 339,172 |
| 4 | Սեպավոր փական DN100, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 70,20 | 70,204 |
| 5 | Սեպավոր փական DN80, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 58,35 | 58,355 |
| 6 | Սեպավոր փական DN50, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 36,82 | 73,644 |
| 7 | Պողպատե կցաշուրթ DN100, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 8,89 | 8,893 |
| 8 | Պողպատե կցաշուրթ DN80, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 7,34 | 14,678 |
| 9 | Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 4 | 5,44 | 21,762 |
| 10 | Պողպատե (St) պատյան D=273x4մմ, մոնտաժումով | գծմ | 8,0 | 21,55 | 172,364 |
| 11 | Պողպատե D=273x4մմ պատյանի նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում | գծմ | 8,0 | 1,31 | 10,499 |
| 12 | Պոլիէթիլենե անկյունակ de110, α=90°, մոնտաժումով | հատ | 1 | 6,47 | 6,473 |
| 13 | Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ de110xde63 , մոնտաժումով | հատ | 1 | 10,88 | 10,881 |
| 14 | Պոլիէթիլենե անցում de110xde90, մոնտաժումով | հատ | 1 | 5,06 | 5,058 |
| 15 | Պոլիէթիլենե անցում de110xde63, մոնտաժումով | հատ | 1 | 4,85 | 4,854 |
| 16 | Պոլիէթիլենե անցում de90xde63, մոնտաժումով | հատ | 1 | 2,88 | 2,880 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Պոլիէթիլենե միջադիր de63, մոնտաժումով | հատ | 3 | 2,52 | 7,568 |
| 18 | Պոլիէթիլենե խցափակիչ de63, մոնտաժումով | հատ | 1 | 3,40 | 3,402 |
| 19 | Մետաղական կափարիչ, տեղադրումով | տ | 0,029 | 680,20 | 19,726 |
| 20 | Մետաղական մարրերի յուղաներկում 2 անգամ | մ² | 1,0 | 0,93 | 0,930 |
| 21 | Պոլիէթիլենե (PE) de110, de90 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 1,080 | 95,18 | 102,791 |
| 22 | Պոլիէթիլենե (PE) de63 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,220 | 80,84 | 17,786 |
| | *Ապամոնտաժման աշխատանքներ* | | | 0,00 | |
| 1 | Փականի ապամոնտաժում Ø100 | հատ | 2 | 1,53 | 3,058 |
| 2 | Փականի ապամոնտաժում Ø50 | հատ | 3 | 0,89 | 2,676 |
| 3 | Փականի ապամոնտաժում Ø40 | հատ | 1 | 0,89 | 0,892 |
| 4 | Պողպատե (St) խողովակների ապամոնտաժում Ø100 | գծմ | 8,0 | 0,41 | 3,262 |
| 5 | Պողպատե (St) խողովակների ապամոնտաժում Ø50 | գծմ | 8,0 | 0,32 | 2,548 |
| 6 | Պողպատե (St) խողովակների ապամոնտաժում Ø40 | գծմ | 4,480 | 0,32 | 1,427 |
| | *Ընդամենը 1 մասի* | | | | 8 592,001 |
| | 2. Ջրագիծ Ջ-2 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կոդալիցքով | մ³ | 65,0 | 0,57 | 37,268 |
| 2 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կոդալիցքով | մ³ | 13,0 | 2,73 | 35,446 |
| 3 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ³ | 6,0 | 5,44 | 32,643 |
| 4 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ³ | 11,0 | 3,96 | 43,588 |
| 5 | Խրամուղու ետլիցք, կոդալիցքի մշակված գրունտներից տոփանումով | մ³ | 60,50 | 0,32 | 19,271 |
| 6 | Ավելացած գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ³ | 17,50 | 2,62 | 45,932 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0,00 | 0,000 |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de40, PN 1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 120,0 | 0,80 | 96,324 |
| 2 | Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ de110xde40, մոնտաժումով | հատ | 1 | 9,07 | 9,072 |
| 3 | Պոլիէթիլենե խցափակիչ de40, մոնտաժումով | հատ | 1 | 1,94 | 1,937 |
| 4 | Պոլիէթիլենե (PE) de40 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,120 | 80,84 | 9,701 |
| | *Ընդամենը 2 մասի* | | | | 331,182 |
| | 3. Ջրագիծ Ջ-3 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կոդալիցքով | մ³ | 71,50 | 0,75 | 53,749 |
| 2 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կոդալիցքով | մ³ | 13,0 | 0,57 | 7,454 |
| 3 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ³ | 6,50 | 5,44 | 35,363 |
| 4 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ³ | 12,0 | 3,96 | 47,550 |
| 5 | Խրամուղու ետլիցք III կարգի կոդալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ³ | 13,0 | 0,32 | 4,141 |
| 6 | Խրամուղու ետլիցք IV կարգի կոդալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ³ | 52,50 | 0,37 | 19,399 |
| 7 | Ավելացած IV կարգի գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ³ | 19,0 | 3,17 | 60,279 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de40, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 130,0 | 0,80 | 104,351 |
| 2 | Գնդային փական DN32, մոնտաժումով | հատ | 1 | 7,26 | 7,263 |
| 3 | Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ de110xde40, մոնտաժումով | հատ | 1 | 9,07 | 9,072 |
| 4 | Պարձուրակային կցորդիչ de40, մոնտաժումով | հատ | 2 | 2,15 | 4,307 |
| 5 | Պոլիէթիլենե խցափակիչ de40, մոնտաժումով | հատ | 1 | 1,94 | 1,937 |
| 6 | Պոլիէթիլենե (PE) de40 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,130 | 80,84 | 10,510 |
| | ***Ընդամենը 3 մասի*** | | | | **365,373** |
| | **4. Ջրագիծ Ջ-4** | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^3$ | 300,0 | 0,57 | 172,007 |
| 2 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ$^3$ | 23,0 | 5,44 | 125,132 |
| 3 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ$^3$ | 47,0 | 3,96 | 186,239 |
| 4 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ$^3$ | 229,0 | 0,32 | 72,944 |
| 5 | Ավելացած գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ$^3$ | 71,0 | 2,62 | 186,354 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0,00 | 0,000 |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de63, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 210,0 | 1,54 | 323,755 |
| 2 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de50, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 175,0 | 1,04 | 182,837 |
| 3 | Սեպավոր փական DN50, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 1 | 36,82 | 36,822 |
| 4 | Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 3 | 5,44 | 16,322 |
| 5 | Պոլիէթիլենե անկյունակ de63, α=90°, մոնտաժումով | հատ | 4 | 4,18 | 16,717 |
| 6 | Պոլիէթիլենե եռաբաշխիչ de63, մոնտաժումով | հատ | 1 | 4,80 | 4,803 |
| 7 | Պոլիէթիլենե անցում de63xde50, մոնտաժումով | հատ | 1 | 2,23 | 2,230 |
| 8 | Պոլիէթիլենե միջադիր de63, մոնտաժումով | հատ | 2 | 2,52 | 5,046 |
| 9 | Պոլիէթիլենե խցափակիչ de50, մոնտաժումով | հատ | 1 | 2,38 | 2,383 |
| 10 | Պոլիէթիլենե (PE) de63, de50 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,3850 | 80,84 | 31,125 |
| | ***Ընդամենը 4 մասի*** | | | | **1 364,713** |
| | **5. Ջրագիծ Ջ-5** | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^3$ | 84,0 | 0,75 | 63,146 |
| 2 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | մ$^3$ | 25,0 | 0,57 | 14,334 |
| 3 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | մ$^3$ | 8,50 | 5,44 | 46,244 |
| 4 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | մ$^3$ | 17,50 | 3,96 | 69,344 |
| 5 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով | մ$^3$ | 82,50 | 0,32 | 26,279 |
| 6 | Ավելացած գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | մ$^3$ | 26,50 | 3,17 | 84,073 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | | 0,000 |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de63, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 140,0 | 1,54 | 215,837 |
| 2 | Պոլիէթիլենե անցումային եռաբաշխիչ de90xde63, մոնտաժումով | հատ | 1 | 8,89 | 8,893 |
| 3 | Պոլիէթիլենե խցափակիչ de63, մոնտաժումով | հատ | 1 | 3,40 | 3,402 |
| 4 | Պոլիէթիլենե (PE) de63 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,140 | 80,84 | 11,318 |
| | *Ընդամենը 5 մասի* | | | | 542,870 |
| | 6. Ջրագիծ Ջ-6 | | | | |
| | *Հողային աշխատանքներ* | | | | |
| 1 | Խրամուղու մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով | $մ^3$ | 66,0 | 0,75 | 49,614 |
| 2 | Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով | $մ^3$ | 20,0 | 0,57 | 11,467 |
| 3 | Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ | $մ^3$ | 6,50 | 5,44 | 35,363 |
| 4 | Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում | $մ^3$ | 13,50 | 3,96 | 53,494 |
| 5 | Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից` տոփանումով | $մ^3$ | 65,50 | 0,32 | 20,864 |
| 6 | Ավելցված գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա | $մ^3$ | 20,50 | 3,17 | 65,038 |
| | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | | | 0.00 | |
| 1 | Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de63, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով, փորձարկումով | գծմ | 110,0 | 2,64 | 290,679 |
| 2 | Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.6ՄՊա, մոնտաժումով | հատ | 2 | 5,44 | 10,881 |
| 3 | Պոլիէթիլենե միջադիր de63, մոնտաժումով | հատ | 1 | 2.52 | 2,523 |
| 4 | Պոլիէթիլենե խցափակիչ de63, մոնտաժումով | հատ | 1 | 3,40 | 3,402 |
| 5 | Պոլիէթիլենե (PE) de63 խողովակների լվացում, ախտահանում | կմ | 0,110 | 80,84 | 8,893 |
| | *Ընդամենը 6 մասի* | | | | 552,218 |
| | *Ամբողջը 1 - 6 մասերի* | | | | 11 748,356 |
| | ԱԱՀ 20% | | | | 2349,671 |
| | Ամբողջը | | | | 14 098,0 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000519
ՀՎՀՀ 08907717
-------------- Ա. Սահակյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ. գ.Գեղամավան
2րդ փողոց.3-րդ նրբ.. 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
--------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Կապալառուն աշխատանքները կատարում է Արփի համայնքում:

*Հավելված թիվ 2*
*« 21 » հուլիս 20 17թ. կնքված*
*« ՀՀԿԶՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-1»* *ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
*<< ՀԵՐՄՈՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ >>*
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ջրագիծ Ջ-1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.2 | Տեխնոլոգիական աշխատանքներ | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000436
ՀՎՀՀ 08907717
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան 2րդ
փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<Հայէկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/6
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված թիվ 2*
*« 21 » հուլիս 20 17թ. կնքված*
*« ՀՀՎՋԱ-ԳՀԱՇՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
*<< ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ >>*
**ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | **Ջրագիծ Ջ-1** | | |
| 1.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.3 | *Ասֆալտապատման աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 2 | **Ջրագիծ Ջ-2** | | |
| 2.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 2.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 3 | **Ջրագիծ Ջ-3** | | |
| 3.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 3.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 4 | **Ջրագիծ Ջ-4** | | |
| 4.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 4.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 5 | **Ջրագիծ Ջ-5** | | |
| 5.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 5.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 6 | **Ջրագիծ Ջ-6** | | |

| | | | |
|---|---|---|---|
| 6.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 6.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000519
ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան 2րդ
փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 21 » հուլիս 2017 թ. կնքված*
*« ՀՀՎՁՍ-ԳՀԱՇՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
*<< ՆՈՐ ԱՁՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, >>* **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Ճյուղ-1 | | |
| 1.1 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.2 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| | *Ապամոնտաժման աշխատանքներ* | | |
| 1.3 | *Հողային աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 1.4 | *Տեխնոլոգիական աշխատանքներ* | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 2 | Գլխամասային ջրընդունիչ N1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| 3 | Առկա ոռոգման առվին միացման հանգույց | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը | 30.09.2017թ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000543
ՀՎՀՀ 08907717
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ. գ.Գեղամավան 2րդ
փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>.
<<Սևանի>> մ/ճ
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 21 » հուլիս 2017թ. կնքված
«ՀՀՎՁԱ-ԳՀԱՇՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Աշխատանքի գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 45611300/30 | Հերմոն համայնքի խմելու ջրի արտաքին ցանցի հիմնանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 5988000 | 5988000 | 5988000 | 5988000 | 5988000 | 5988000 | 5988000 |
| 7 | 4501300/29 | Արփի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի հիմնանորոգում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 9342000 | 9342000 | 9342000 | 9342000 | 9342000 | 9342000 | 9342000 |
| 8 | 45221142/16 | նոր Աղնաբերդ համայնքի ոռոգման ջրագծի կառուցում | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 3540000 | 3540000 | 3540000 | 3540000 | 3540000 | 3540000 | 3540000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
3-րդ չափաբաժին Հ/Հ 900351000436
7-րդ չափաբաժին Հ/Հ 900351000519
8-րդ չափաբաժին Հ/Հ 900351000543
ՀՎՀՀ 08907717
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

<< Էդիտա>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան 2րդ փողոց,3-րդ նրբ., 25 տուն
<<ՀայԷկոնոմբանկ>>
<<Սևանի>> մ/6
Հ/Հ 163148100718
ՀՎՀՀ 08601046
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*« 21 » հուլիս 20 17թ. կնքված*
**« ՀՀԿԶՄ-ԳՀԱԾՁԲ-03/17-1»** *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
_______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելու վայրը _______________
հհ _______________
_______________
հվհհ _______________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս _______________ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_______________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*« 21 » հուլիս 2017 թ. կնքված*
*« ՀՀԿԶՄ-ԳՀԱԾՁԲ-03/17-1» ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________________-ի
Պատվիրատուի անունը — Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ____________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը — պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն